



ԹԻՍԱՆՈՒՑԻ

ՄՃԱԿԱՐՅԱՆ ԱԳՐՈԶԵԿՈՒԿԱԿԱՆ  
ՀԻՄՈՒԿԱՆ ՑՈՒՑԱԿԱՄՆԵՐ

633  
Ծ-60

ԳՅՈՒՂԴՐԱՑ

1937

ՅԵՐԵՎԱՆ

633

Ծ-60

ԾԱԱԽՈՏԻ  
ՄՅԱԿՈՒԹՅԱՆ ԱԳՐՈՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ  
ՑՈՒՑԱԿՆԵՐ

62

**Շամասի ՄՅԱԿՈՒԹՅԱՆ ԱԳՐՈՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱՎԿԱՆ  
ՅՈՒՅՈՒՄՆԵՐԸ**

ՀՆ-ՐԴ Կուսհամագումարի վորոշումը բերքի բարձրաց-  
ման մասին, վորտեղ գրված ե «յերկրորդ հնգամյակի  
կենարանական խնդիրը պետք ե լինի խորհանակեալթյուն-  
ների և կոլտնտեսությունների բերքատվության վճռական  
բարձրացումը, այժմ առավիկ ևս մեր յերկրի գյուղատըն-  
աեսության զարգացման, մասնավորապես ծխախոտագուր-  
ծության ասպարիզում, աշխատանքների կարևորագույն  
ուղեցույցը պետք ե լինի:

Կոլտնտեսությունների կազմակերպչական և տնտեսական ել ավելի ամրապնդան համար կիրառվող ձեռնարկումների շարժաւը խոշոր նշանակություն ունի ծխախտադրծության ազրոտեխնիկայի ձիւշտ կիրառումը:

Առատ և բարձրորակ բերք ստանալու համար անհրաժեշտ է կիրառել մի շարք պայմաններ և, յեթե զրանցից մեկն ու մեկը չի կիրառվում, այն ժամանակ մնացած պայմանների ազդեցությունը նսեմանում է, կամ բոլորով մեջ արդյունք չի տայիս:

Այդ պայմանները համառոտ կերպով հետելայն են.

## I. ՀՈՂԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

ՅԵԹԿ լնդիանուր կլիմայական պայմանները նպաստավոր են ծխախոտի աճման համար, ապա ձխախոտը հնարավոր ե մշակել բոլոր տեսակի հողերում, սակայն

## Ա. ՀՐԴԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

արդյունաբերության համար պիտանի և յավորակ ծխախոռ  
ստանալու նպատակով անհրաժեշտ ե կատարել հողի ընտ-  
րություն:

Վորակավոր ծխախտ ստանալու համար ամենաաբ-  
մար հողերն են.

ա) թեթև և միջակ կավավագային հողերը՝ մանր քարերի  
և գրոշ չափի բուսահողի (հումուսի) խառնուրդով: Այ-  
նողերը տաք են լինում, ծխախոտն աճում ե համաչափ,  
նորմալ, բարակ ջղերով և ունանում ե լով վորտի:

բ) թեթև ավազային և ավազակավային հողերը՝  
առանց խոշոր քարերի, բայց զգալի չափով բուսահողով:  
Այս հողերը հարմար են մշակելու, տնկելու և քաղաքանի-  
աշխատանքների նկատմամբ. տաքվում ե միջակ և բա-  
վականին լավորակ բերք:

գ) անտառային և սևահողակրային հողեր.

դ) հողամասերի թեքությունը պետք ե լինի հարա-  
գային, հարագարելյան ուղղությամբ: Այսպիսի թեքու-  
թյուն ունեցող հողերը լավ են տաքանում արևից, ծիա-  
խոտը լավ ե հասունանում:

Հյուսիսալին թեքություն ունեցող հողամասերում  
ծխախոտի աճումը թույլ ե լնթանում և աշնան սառնա-  
մանիքներից այն կարող ե վնասվել.

ե) հողամասերը պետք ե զերծ լինեն հյուսիսային և  
հյուսիսարեկլյան քամիներից, ինչպես նաև հեղեղներից.

զ) ծխախոտի հարմար հողեր են համարվում նաև  
խամմ հողերը, խոպանները, խոտհարքները, խոտարույսներից  
և հացահատիկներից հետո աղատված հողերը:

Ծխախոտի մշակման համար չպետք ե հատկացնել չա-  
փազանց խոնավ, աղային, ավազային, փոշիացած և ճրա-  
գախոտով վարակված հողամասեր:

Հողամասերի ընտրությունն ու հատկացումը պետք ե  
կատարվի աշնանը:

Աշնան հերկը պետք ե կատարել 18—20 սմ խորու-  
թյամբ և այդ աշխատանքները պետք ե ավարտել մինչեւ  
հոցեմքերի 10-ը: Հողի փխրությունն ու խոնավությունը  
պահպանելու համար, ինչպես նաև դաշտը մոլախոտեցից  
զերծ պահելու նպատակով, անհրաժեշտ ե աշնան հերկը  
վաղ գարնանը փոցիսել: Փոցիսել այն ժամանակ, իերք հո-  
գամասի վերնաշերտն այնքան ե չօրացել, վոր փոցին աշ-  
խատելիս հաղը փշրվում ե, ցեխ չի դառնում և չի կըպ-  
չում փոցիսի տատաներին: Այդ աշխատանքը չպետք ե ու-  
շացնել, վարովհետեւ չորացած հողը բավականաչափ կորց-  
նում ե իր մեջ կուտակված պահեստի ջուրը և, բացի այդ,  
մշակման աշխատանքները դժվարանում են:

Շատ թեքություն ունեցող հողամասի հերկը պետք ե  
կատարել հորիզոնական ուղղությամբ (լայնքից):

Այդ հողամասերում ցանվող ծխախոտը հեղեղի վտան-  
գից ապահովելու նպատակով, մեկը մյուսից 8—9  
մետր հեռավորության վրա առվակներ պետք ե բանալ:

Աշնան և վոչ գարնան հերկած հողամասերում, սածի-  
լիլաց 10—15 որ առաջ, կրկնավար պետք ե կատարել  
և ապա փոցիսել:

Կրկնավարի խորությունը պետք ե լինի վոչ պակա-  
քան 10—12 սմ. կրկնավարը կարելի լի կատարել բազմա-  
խափ գութանով:

Հացահատիկների տակ լեղած հողամասերը, լեթե հա-  
շորդ տարին հատկացվելու լին ծխախոտին, հացահատիկ-  
ների բերքահավաքից հետո անմիջապես 8—10 սմ խորու-  
թյամբ վարել և ուշ աշնանը ցրտահերկ կատարել:

Յեթե աշնան և գարնան հերկած հողամասերում մինչև նախասածիլի հերկ կատարելը մոլախոտեր են զարգանում, պետք եւ վոչնչացնել ափսեյավոր փոցիսերով կամ բազմախոփ գութանի հերկով:

Աշնան և գարնան հերկն անպայման գութանով պետք եւ կատարել: Գարնան վարի աշխատանքը պետք եւ ավարտել մինչև մայիսի 1-ը:

### III. ՑԱՆՔԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԾԽԱԽՈՏԻ ՆԱԽՈՐԴՆԵՐԸ

Ծխախոտագործական կոլտնտեսություններում պետք եւ անցկացնել ցանքաշրջանառություն և ծխախոտի համար հիմնականում ոգտագործել մեկ մասսիվի հողակտորներ, վորոնք ծխախոտի համար նպատակահարմար նախորդներ են հանդիսանում (աշնան ցորեն, խոտաբուլսեր, լիզիպացորեն, ընդեղեններ):

Ցանքաշրջանառությունն անց եւ կտցվում համաձայն հողաժնի ծրագրի, գյուղատնտեսի և հողաշնարարի անմիջական ցուցումներով:

### IV. ՊԱՐԱՐՏԱՑՈՒՄ

Ծխախոտի ուժասպառ հողամասերը պետք եւ պարարտացնել հանքալին կամ որդանական պարարտանյութերով:

Հանքալին պարարտանյութերը պետք եւ շաղ տալ հասուն շարքացանով, քամի չեղած որերին, կամ, հակառակ զեպքում, ձեռքով՝ հավասար չափով, դաշտը շիմիլելուց 10—14 որ առաջ, վորից հետո անմիջապես փոցիսեր:

Նախքան պարարտանյութեր գործադրելն անհրաժեշտ

է նրանցից խառնուրդ պատրաստել: Սուլֆատ-ամմոնիումն ու սուլերֆոսֆատն իրար կարելի յեւ խառնել գոշտ փախաղբելուց մի քանի որ առաջ:

Խառնուրդ պատրաստելիս անհրաժեշտ եւ ազուային և ֆոսֆորալին պարարտանյութերը քաշով ու խնամքով խառնել իրար՝ նախորդ մանրացնելով մեջը լիզած կոշտերն ու դարձնելով փոշենման մասսա:

Մեկ հեկտարին պետք եւ գործադրել սուլֆատ-ամմոնիում (20 տոկոսյա) 140—160 կգ սուլեր-ֆոսֆատ (14 տոկոսյա)՝ 300—320 կգ և կալիում-ոկտո. (40 տոկոսյա)՝ 150 կիլոգրամ:

Հողին միայն սուլերֆոսֆատ տալու դեպքում մեկ հեկտարին պետք եւ տալ 300—350 կգ, իսկ միայն սուլֆատ ամմոնիում տալու դեպքում՝ 150—200 կիլոգրամ:

Հանքալին պարարտանյութերը ձեռքով շաղ տալու գեպքում դաշտը գութանով կամ արորով պետք եւ բաժանել հավասարաչափ մասերի և հիմք ընդունելով պարարտանյութերի վերոհիշյալ չափը մեկ հեկտարի համար՝ գործել յուրաքանչյուր մասին տրվելիք պարարտանյութերի չափը և անուենեան յուրաքանչյուր հողամասում հավասարապես շաղ տալ համապատասխան չափով պարտանյութեր:

Որգանական նյութերով (գոմաղբով) պարարտացնելու գեպքում մեկ հեկտարին գործադրել 18—24 տոնն, նայած հողի բերբիության:

Գոմաղբը հողին պետք եւ տալ քայքայված վիճակում՝ աշնանը կամ վաղ գարնանը, վոչ ուշ քան ծխախոտը տնկելուց մեկ—մեկ ու կես ամիս առաջ:

Պարարտանյութերն առաջին հերթին պետք եւ տալ

արն հողամասերին, վորոնք ծխախոտի միջակից ցածր բերք  
են տալիս, իսկ հետո՝ միջակ բերք տվող հողամասերին:

Հանքային պարարտանյութերը մինչև գործադրելն  
առաջանան պետք ե պահել ծածկած շենքերում կամ ծած-  
կոցների տակ:

## V. ՍԱԾԻԼԱՆՈՑՆԵՐ

### 1. ՀՈՂԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՄՇԱԿՈՒՄԸ

Սածիլանոցի համար հողամասի ընտրությունը պետք  
է կատարել աշնանը, մինչև նոյեմբերի 10-ը:

Սածիլի համար հատկացված հողամասը պաշտպան-  
ված պետք ե լինի հեղեղներից ու քամիներից և լիովին  
արևոտ լինի:

Հողամասը պետք ե լինի փիրուն և ջրաթափանցիկ,  
ստորերկրյա ջուրը հողի վերնաշերտի մակերգութից բա-  
վականին խոր լինի:

Այդ հողամասը պետք ե լինի հարթավայրում, կամ,  
հակառակ գեղքում, ունենա քիչ թեքություն դեպի հա-  
րավ կամ հարավ-արմուտք և լրիվ չափով ապահոված լինի  
փոռզելու ջրով:

Սածիլանոցի համար չպետք ե հատկացնել ծխախոտի  
չորանոցին մոտիկ գտնվող հողամասեր, ինչպես նաև այն  
հողամասերը, վորոտեղ նախորդ տարին ծխախոտ կամ բան-  
ջարեղեն ե մշակվել:

Սառը և կիսատաք մարգերի համար հատկացրած հո-  
ղամասերն առաջին անգամ պետք ե վորել աշնանը, իսկ  
ծայրահեղ դեղքում՝ վաղ գարնանը:

Վարացես ընդհանուր կանոն, ինչ սածիլանոցները, վո-

րոնք թողնվում են հաջորդ տարվա համար, մոլոխոտերից  
մաքուր պետք ե պահպեն: Աշնանը ջերմոցների փոսելը  
պետք ե մաքրվեն, ըստ վորում ջերմոցի սննդառու շերտն  
առանձնացվում ե ու բովվում՝ հետագալում իբրև պա-  
րարտանյութ սածիլանոցներում ոգտագործելու համար,  
իսկ մնացած մասը տեղափոխվում ե դաշտ՝ պարարտաց-  
նելու համար:

### 2. ՍԱԾԻԼԱՆՈՑԻ ՏԻՊՆ ՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Ամեն մի հեկտար տարածություն սածիլելու համար  
պետք ե ունենալ 70 մմ տարածություն զուտ սածիլանոց՝  
բաց մարգերով (հաշված մարգերի միջին տարածությու-  
նը), կամ 40 մմ շրջանակավոր ջերմոցներում:

Սառը մարգերի սածիլանոցի հողամասի 2-րդ փորելը  
պետք ե ավարտվի մինչև մարտի 5-ը, իսկ մարգեր պատ-  
րաստելն ու պարարտացնելը՝ ցանքից 5 որ առաջ:

Շրջանակավոր ջերմոցների համար շրջանակներ պատ-  
րաստելը, փոսեր փորելն ու թարմ աղը լցնելը պետք ե  
կատարվի մինչև փետրվարի 20-ը:

Սածիլանոցում անհրաժեշտ ե անպայման կատարել  
հողի և գոմաղբի ախտահանում: Այդ աշխատանքները  
շրջանակավոր ջերմոցներում պետք ե ավարտել մինչև  
մարտի 1-ը, իսկ սառը մարգերում՝ մինչև մարտի 10-ը:

Սառը մարգերի լայնությունը պիտի լինի 1 մետրից  
վոչ ավելի, իսկ յերկարությունը 8—14 մետր: Ջերմոցների  
լայնությունը պետք ե լինի 2 մետրից վոչ ավել, իսկ  
յերկարությունը՝ 8—10 մետր:

Ջերմոցների հյուսիսային պատի բարձրությունը պետք

և լինի հողի բարձրությունից 30—35 սմ, խակ հարավակալին պատինը՝ 15—20 սմ:

Մարգերի և ջերմոցների ուղղությունը պետք է լինի արևելքից — արևմուտք, իսկ թեքությունը՝ գեպի հարավ:

Սածիլներն աճեցնելու համար սննդատու շերտը պետք է բաղկացած լինի այն հին, փտած գոմաղբից, վորը չի կորցրի իր սննդարար հատկությունը, անտառային հողի (կամ բերբի հողի) և ավազի խառնուրդներից, հետեւալ հարաբերությամբ — գոմաղբ՝ 50%, անտառի հող (կամ բերբի հող)՝ 25% և ավազ՝ 25%:

Սննդարար նյութերի խառնուրդ կազմելիս խառնվելիք նյութերը նախորոք առանձին-առանձին պետք են մաղել:

Սննդարար նյութերի խառնուրդից մարգերի մեջ պետք են ածել 4-6 սմ հաստությամբ.

Սածիլանցների նախացանքային ու ցանքային շերտերը նախօքան ոգտագործելու անհրաժեշտ են ստերիլիզացիայի և նիթարկել (բովել) տապակարաններում, վորով վաշնչացվում են վարակիչ հիվանդությունների սնկերը, բակտերիաներն ու մոլոխոտերի սնրմերի մեծ մասը:

Տապակարանները պետք են պատրաստվեն հաստ յերկաթաթիթեղից, յուրաքանչյուր տապակարան պետք են ունենա 120 սմ յերկարություն, 70 սմ լայնություն և 15 սմ բարձրություն:

Վառարանը, վորի վրա պետք է դրվեն տապակարանները, լերկար առվի պես և՝ 49 սմ խորությամբ (հաշված տապակարանի հատակից մինչև առվի հատակը) վերին պոռւնդները պատրած են լինում աղյուսով կամ բարպով, վորակեազի աշխատանքի ժամանակ հողը ցած չթափվի:

Առվի յերկարությունը կախված է վրան դրվելիք տապակարանների քանակից: Ավելի նպատակահարմար են յուրաքանչյուր վառարանը պատրաստել չորս տաղակաշանի համար:

Այդ գեպում վառարանի յերկարությունը կլինի 2,8 մետր, իսկ լայնությունը՝ 1,1 մետր:

Տապակարանները դրվում են առվի վրա, ըստ նրանց յերկարության:

Սածիլանցային խառնուրդը (հողի և գոմաղբի խառնուրդ կամ միայն գոմաղբ) լցնում են տապակարանների մեջ՝ և ջրով մի քիչ խոնավացնում, ինչը բավականաչափ խոնավ չել:

Չի թույլատրվում չոր խառնուրդը բովել վորովինեմ դրանից այնպիսի մնացակար նյութեր կառաջանան, վորոնք վատ են ազդում սերմերի ծլունակության վրա:

Բովելու ժամանակ յեթե խառնուրդը չորանում են, նորից պետք են խոնավացնել:

Բովելու ժամանակ տապակարանները պետք են ծածկել փալտե խուփերով, 3—6 րոպեն մեկ անգամ խառնուրդը թիակներով լավ խառնել մանականդ խնամքով պետք են խառնել պատերի կողքերը, վորպեսզի խառնուրդը հավասարաչափ տարանաւ:

Զերմաստիճանը Յելսուսի ջերմաչափով պետք է հասցնել 100-ի: Հենց վոր խառնուրդի ջերմաստիճանը հաւանի այդ չափին, մի անգամ ել լավ պետք են խառնել և կրակի վրա թողնել ևս 20—30 րոպե, վորից հետո խառնուրդը պետք է թափել և նորը բովել: Խառնուրդը պետք է բովել ամենաաւշը ցանքից 6—8 որ առաջ, վորպեսզի հանգստանա, վորորհետև նոր բոված խառնուրդի

մեջ սածիլների աճումը դանդաղ է ընթանում, իսկ շատ շուտ բովելուց ել խառնուրդը նորից կարող է վարակվել հիվանդությունների վարակիչներից:

Սածիլանոցի հողամասը պետք է պարարտացնել նաև հանքային աղերով. մեկ ֆմ տարածության համար պետք է ծախսել ծծմբաթթվի ամոնիում ( $20^0/0$ -իա), չոր փեճական 10 գրամ և սուպերֆոսֆատ ( $14^0/0$ -իա)՝ 7 գրամ:

Հետապայում հանքային պարարտանյութը պետք է տալ ջրախառն վիճակում՝ ջրելու միջոցով (սոծիլի աճման ընթացքում, վոչ պակաս 2 անգամից), տալով յուրաքանչյուր անգամ մեկ ֆմ տարածության համար 5 գրամ ծծմբաթթվի ամոնիում և 7 գրամ սուպերֆոսֆատ:

### 3. ԱԼԲՄԻ ՑԱՆՔԸ, ԱԱԾԽԼԻ ԱՃԵՑՈՒՄՆ ՈՒ ԽՆԱՄՔԸ

Զերմոցներում կամ մարդերում պետք է ցանել բացառապես տեսակավոր սերմեր, վորոնք ստացվում են չամամիութենական ծխախոտագործական, ինստիտուտից:

Զերմոցներում մեկ ք. մետր տարածության վրա պետք է ցանել 0,8 գրամ, իսկ բաց մարդերում՝ մեկ գրամ ախտահանված սերմ:

Խիտ, ցանելու գեպքում սածիլները մեծ չափով վարակվում են զանազան հիվանդություններից, և ստացվում են թույլ ու ձգված սածիլներ, վորոնք պիտանի չեն դաշտում տնկելու:

Սերմերի ախտահանումը կատարվում է ծխախոտը չեղություն (բակտերիալ բծավորություն) հիվանդություններից զերծ պահելու նպատակով:

Եխտահանումը կատարել սերմերը ցանելուց կամ ծկցնելուց առաջ՝ թարմ պատրաստված լուծույթում:

Եխտահանումը կատարվում է հետեւյալ կերպ. կավե կամ վայտե ամանում մեկ լիտր ջրի մեջ մեկ գրամ աղոտաթթվական արծաթ (լյապիս) են լուծում:

Լուծույթը վոչ մի գեպքում չի կարելի պատրաստել մետաղի ամանում:

Լուծույթը պատրաստելու համար վերցնել անձրեկ ջուր, հակառակ դեպքում՝ մաքուր ջուր:

Եխտահանվող սերմերը լցնում են վորեւ կտորից կարիքած տուլրակի մեջ այն հաշվով, վոր սերմերը տուլրակի կես մասը բռնեն, վորից հետո տուլրակը սերմերով  $10-15$  լոպե զցում են լուծույթի մեջ:

Այդ ժամանակամիջոցում տուլրակը մերթընդմերթթափ է տրվում, վոր սերմերը հավասարաչափ թրջվեն:

Այս ձևով սերմերը լուծույթում թրջելուց հետո տուլրակը հանում են ու սերմերը մոտավորապես  $10-15$  լոպե լվանում հոսող մաքուր ջրով: Հոսող ջուր լվինելու դեպքում սերմերը լվացվում են վորեւ ամանի մեջ (վոչ մետաղե), վորի ժամանակ  $2-3$  լոպեն մեկ անգամ ( $10-15$  լոպե ժամանակամիջոցում) ջուրը պետք է փոխել:

Սերմերը լվանալուց հետո յեթե անմիջապես չեն ցանկում կամ ծլեցվում, ստվերուտ տեղում պետք է փոխել վորեւ կտորի վրա և չորացնել:

Միևնույն լուծույթում կարելի յե սերմերն ախտահանել յերեք անգամից վոչ ավելի:

Մի լիտր ջրի մեջ լուծված մեկ գրամ լյապիսը կարող է ախտահանել մեկ կիլոգրամ ծխախոտի սերմ:

Սածիլը չեշոտությամբ վարակվում է վոչ միայն սերմերի միջոցով, այլև սածիլանոցների շրջանակների, ծածկոցների ու ջերմոցային մյուս գույքի, ինչպես և վարակված հին ծխախոտի մնացորդների միջոցով:

Սխտահանված սերմերից առողջ սածիլ ստանալու համար անհրաժեշտ է ախտահանել նաև ջերմոցի ամբողջ գույքը (ըլջանակները, ծածկոցները և այլն):

Գույքն ախտահանելու համար, մեկ մաս փորմալինից և 25 մաս ջրից լուծույթ են պատրաստում, այդ լուծույթով ջերմոցի գույքը թրջում է մեկ որ պահում են բրեգենափառ կամ այլ ծածկոցի տակ:

Ծխախոտի սերմերի ցանքը կատարել հետեւյալ ժամկետներին.

Զերմոցներում՝ մարտի 1-ից մինչև 20-ը:

Բաց կիսատաք մարգերում՝ մարտի 10-ից մինչև ապրիլի 10-ը:

Սառը մարգերում վաղ ցանքը պետք է կատարել մինչև մարտի 15-ը չծլեցրած սերմերով, իսկ հետագայում ցանել ծլեցրած սերմեր:

Հավասար ցանք ստանալու համար ծլեցրած կամ չծլեցրած սերմերը ցանելուց առաջ անհրաժեշտ է խառնել մաղած գոմաղբի կամ հողի հետ:

Մեկ մաս սերմին խառնել 10--12 մաս գոմաղբ, հող կամ մոխիր:

Ցանքը պետք հանձնարարել հմուտ մարդկանց: Ցանքից առաջ և ցանելուց հետո անհրաժեշտ է մարգերը նստեցնել (տրամբովկայի յենթարկել): Ցանքսից հետո սերմերը ծածկելու նպատակով պետք է շաղ տալ անդախառնուրդ:

Սերմերը ծածկող մննդախառնուրդի շերտի հաստությունը պետք է լինի կեսից մինչև մեկ սմ (մեկ մատիտի հաստությամբ):

Ցանքը չպետք է կատարել քամի յեղանակներին:

Սածիլանոցի հողը սածիլի աճեցողության ամբողջ ըըրջանում պետք է պարունակի նորմալ խոնավություն, վորպեսպի: Սածիլանոցը պետք է ջրել ըստ պահանջի, որական մեկ յերկու անգամ՝ առավույցան և յերեկոյան, մանրածակոտի ցնցուղներով:

Վաղ գարնանը, յերբ ոդը սառն է, սածիլանոցը պետք է ջրել ցերեկը:

Ցրտից, անձրկներից, կարկտից, ձյունից, և առհասարակ վատ յեղանակներից պաշտպանելու համար ամբողջ սածիլանոցը պետք է ծածկոցներով ծածկել:

Տաք որերին չերմոցների ըլջանակները պետք է պահել բարձրացված կամ բոլորովին վերցնել իսկ տաք գիշերները նույնպես բաց պահել:

Սածիլի կանոնավոր աճեցման համար անհրաժեշտ է սածիլանոցը 2--3 անգամ զգուշությամբ քաղհանել: Քաղհանելուց առաջ սածիլանոցն անպայման պետք է ջրել: Քաղհանը կատարել որվա վոչ շոգ ժամերին:

Քաղհանը պետք է կատարել գլխավորապես յերեկոյան, իսկ ամպամած յեղանակներին՝ սմբողջ որը:

#### 4. ԱԱԾԻԼ ՀԱՆԵԼԸ

Սածիլը հանելուց առաջ սածիլանոցի մարգերը պետք է ջրել: Տաք և կիսատաք չերմոցների ըլջանակները նախքան սածիլ հանելը 3--5 որ առաջ պետք է բաց անել, վեր ուածիլներն ընտելանան ցըտին և արկի շոգին:

Բացի ցրանից, սածիլ հանելուց 2--3 որ առաջ պետք է գաղարեցնել չերմոցներ ջրելը:

Սածիլները մեկ-մեկ պետք է հանել:

Սածիլ հանելու համար ժամանակը վաղ առավոտն է և յերեկոյան, որվա մասցած ժամանակը սածիլ հանել կարելի յեւ, յեթե որը ամպամած է:

Սածիլները դաշտ պետք եւ փոխազրել կամ կթոցների, կամ արկղների մեջ արմատները գետի ներս դարսած:

Սածիլելու համար պետք եւ ընտրել պիտանի և առողջ սածիլ, վորը պետք եւ ունենա վոչ պակաս քան 4—5 տերեւ, չհաշված առաջին յերկու սերմնատերեւները:

## VI. ԴԱՇՏԵՐ ՍԱԾԻԼԵԼԸ

### 1. ՍԱԾԻԼԵԼՈՒ ՏԵԽՆԻԿԱՆ

Դաշտ սածիլելը պետք եւ կատարել վաղ առավոտից՝ մինչև ժամի 10—11-ը և յերեկոյան ժամի 5-ից, իսկ ամպորերին՝ ամբողջ որը: Որվա շող ժամերին դաշտը չպետք եւ սածիլել:

Նախան սածիլելը մարդերը պետք եւ ջրել և ապա սածիլել:

Սածիլը կատարել կեռ փայտի, ցցի միջոցով, վորը բարձրացնում եւ թե աշխատանքի արտադրողականությունը և թե վորակը:

### 2. ՍԱԾԻԼԵԼՈՒ ԺԱՄԿԵՑՆԵՐԸ

Դաշտ սածիլելը պետք եւ սկսել տաք և կիսատաք վերմոցներից, մայիսի 1-ից սկսած: Բաց (սառը) մարդերից՝ մայիսի 10-ից մինչև հունիսի 10-ը:

Ծանօթություն.—Գտրնան բարենպաստ յեղանակներին հարթավայր գյուղերում սածիլումը կարելի յեւ սկսել ապրիլի վերջերից: Իսկ բասարդեշարի վրջանում՝ մայիսի 20-ից վոչ շուտ:

## 3. ՍԱԾԻԼԵԼՈՒ ԽՏՈՒԹՅՈՒՆԸ

Դաշտունը պետք եւ սածիլել շաբք-շարք: Խտությունը պետք եւ լինի. «Սամսոն» և «Թիկ-կուլաղ» տեսակների համար՝ 60 սմ, իսկ «Ճրապիղոն» տեսակի համար՝ 70 սմ:

Բույսը բույսից պետք եւ լինի. «Սամսոնի» և «Թիկ-կուլաղի» համար՝ 18 սմ, իսկ «Ճրապիղոն»-ի համար՝ 20—25 սմ:

Դաշտը սածիլելուց հետո 5—6 որվա ընթացքում վերանորոգում պետք եւ կատարել (չորացած սածիլների տեղը նոր սածիլներ տնկել): Սուածին վերանորոգումից հետո, ըստ կարիքի, կատարել նաև շրջ վերանորոգումը՝ վերանորոգման համար պետք եւ վերցնել փարթամ սածիլներ:

## ԾԽԱԽՈՑԻ ԽՆԱՄՔՆ ՈՒ ՄՇԱԿՈՒՄԸ ԴԱՇՏՈՒՄ

### 1. ՄԻՋԱՄՔԱՅԻՆ ՄՇԱԿՈՒՄՆ ՈՒ ՔԱՂՀԱՆԸ

Դաշտը սածիլելուց հետո 1—3 որվա ընթացքում պետք եւ տալ 1-ին ջուրը: Պետք եւ ջրել յերեկոյան ժամերին, հակառակ դեպքում վաղ առավոտյան, լուսնյակ դիշերներին՝ նաև դիշերները:

Մինչև ծխախոտի հասունացումը դաշտերը պետք եւ ջրել ըստ կարիքի, յենելով տեղական պայմաններից: Դաշտը պետք եւ ջրել այն ժամանակ, յերբ հողը բավական չորացել ե, և յերբ ծխախոտի տերևները քիչ թառամած են լինում վոչ միայն ցերեկը այլև առավոտները:

1-ին քաղհանը, հողի փխրեցումը կատարել դաշտը

սածիլելուց վոչ ուշ քան 8—10 որ հետո: 2-րդ քաղճանը,  
հողի փխրեցումը և բուկ տալը կատարել վոչ ուշ քան ա-  
ռաջին քաղճանից 10—12 որ հետո:

Յերրորդ քաղճանը և հողի փխրեցումը կատարել 2-րդ  
քաղճանից 12 որ հետո, իսկ 4-րդ քաղճանը՝ ըստ պահանջի:

## 2. ԲՆԱ.ՏՈՒՄ ՅԵՎ. ԾԱ.ՂԿԱ.ՏՈՒՄ

Տերմների լավ զարգացմանն ու հասունացմանը նը-  
պաստելու նպատակով 2 անգամ զգուշությամբ ծաղկա-  
տում և բջատում պետք է կատարել

Բջատում պետք է կատարել ըստ բջերի զարգացման  
և 2 անգամից վոչ պակաս, թույլ չտալով, վոր բջերը  
10 սմ-ից ավելի յերկար են: Թույլ հողերում բջատումը  
և ծաղկատումը կատարել ավելի վաղ, քան ուժեղ հողե-  
րում: Ուժասպաս հողերում, վորտեղ բույսերը թույլ են  
զարգանում, պետք է կատարել վաղ և ավելի խոր՝ մինչև  
2—3 տերեւ:

Հարուստ և ուժեղ հողերում ծաղկատումը պետք է  
կատարել ուշ և վոչ խոր, առանց ծայրի տերմները կրտ-  
քելու:

Մտնորուրյուն.—Խոնավության պակասության գեղ-  
քում ծաղկատումը կատարել ավելի շուտ և խոր:

Առաջին ծաղկատումը կատարել այն ժամանակ, յերբ  
ծաղկել ե ծխախոսի գաշտի մոտ կես մասը, իսկ 2-րդը  
պետք է կատարել այն ժամանակ, յերբ արդեն ծաղկել  
են մնացածները:

2-րդ ծաղկատման հետ միասին կատարել առաջին  
բջատումը:

## VII. ԲԵՐՔԱՀԱՎԱՔԸ

### 1. ԲԵՐՔԱՀԱՎԱՔԸ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Առաջին քաղճ առհասարակ սկսվում է գաշտը սա-  
ծիլելուց 50—55 որից հետո: 2-րդ քաղճ սկսվում է առա-  
ջին քաղճ ավարտելուց 5—7 որ հետո:

3-րդ քաղճ կատարվում է 2-րդ քաղճից 7—8 որ հետո,  
4-րդը՝ 3-րդից 8—10 որ հետո, 5-րդը՝ 4-րդից 10 որ  
հետո և 6-րդը՝ 8 որ հետո:

Յուրաքանչյուր քաղ պետք է ավարտել մեկ-յերկու-  
որվա ընթացքում:

Իերքահավաքի աշխատանքները պետք է ավարտել  
մինչև սեպտեմբերի 15-ը:

### 2. ԲԵՐՔԱՀԱՎԱՔԸ ԱԳՐԱԿԱՆ

Ծխախոսի բերքը ժամանակին հավաքելու և հումքի  
վորակը բարձրացնելու նպատակով՝ գործադրվող հինգ  
քաղի փոխարեն, բոլոր շրջանների և բուտանիկական տե-  
սակների համար պետք է սահմանել 6 քաղ:

ՔԱՂԵՐԻ ԱՆՈՒՆԸ	Սամառն	Տրապի- զո՞ն	Թիկ-կո- ւո՞ն
	Տերմների քանակը	Տերմների քանակը	Տերմների քանակը
1-ին Քաղ-Դիպսար . . . . .	3—4	2—3	4—5
2-րդ » Խաշամա . . . . .	5—6	3—5	6—7
3-րդ » Յերանալ . . . . .	5—6	3—4	6—7
4-րդ » Անաջ . . . . .	8—9	6—8	8—9
5-րդ » Յենթատորուկ . . . . .	5—6	4—5	6—7
6-րդ » Տորուկ . . . . .	4—5	3—4	4—5
	34—40	21—28	30—36

Այս ազգութակը տրվում է որինատիր. նայած դաշտի պրոթյան, տեղերում տերենների քանակն ըստ քաղերի կարգ է լինել ավելի կամ պակաս:

ԲԵՐՔԱՀԱՎԱՔԻ ԱԿՊԲԻՆ ԿՈՂՄԱՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲՐԻԳԱԴԻԲՆԵՐԸ  
ԱՊԱՀԵՐԱԲԱՐ ԱՏՈՎԳՈՎԱԾ ԵՆ ՃԻՍԱԽՈՏԻ ՀՈՂԱՄԱՆԵՐԸ, ՎՈՐԻ  
ԺԱՄԱՆԱԿ ՎՈՐՈՇՈՎԱԾ ԵՆ.

ա) ծխախոտի հասունացման աստիճանը և հասունացած ու քաղվելու տերևների քանակը.

բ) քաղելու ընույթը՝ համատարած կամ ընտրական։ Ամեն մի քաղը թելի վրա յե շարժում առանձին-առանձին, իսկ չորացնելուց հետո հավանդի յե վերածվում ու կախվում նույնպես առանձին-առանձին։ Ծխախոտի բերքը պետք է հափաքել նրա տեխնիկական հասունացման շրջանում։

Կորականապես արդելվում ե հավաքել չհասունացած  
տերենները և վոչ մի գեազքում թույլ չպետք տալ, վոր  
տերենները գերհասունանան։ Տերեկի տեխնիկական հա-  
սունությունը վորոշվում է հետեւյալ արտաքին նշաններով.

ա) տերեկի մուգ-կանաչ գույնը փոխվում է բաց-կանաչ գույնի և ծածկվում է կպչուն նյութով.

բ) տերեւի միջին գլխավոր ջիզն ավելի բաց գույն  
և սպանմամբ ու տերեւի հեշտությամբ պոկիում ե ցողունից.

գ) տեղակի յեզրելն ու ծայրն սկսում են դեղնել և փառ ինչ թեքվում են դեպի զած.

դ) տեղեկ գառնում և ավելի լիքն ու թանձր:

ՕԵՐԱԽՆԵՐԻ բավականաշատի զեղսասամլ, ԿԵՐՆԱՍՈՒՆԱց-  
ՄԱՆ Նշանն ե: ԲԵՐՔԱԿԱՎԱՔԻ ընթացքում վոչ մի զեպ-  
ՔՈՒՄ չի թույլատրվում տերևների տարբեր քաղերն իրար  
ԽԱռնել:

Ծխախոտի բոլոր հիվանդութ և մեխանիկական վնաս-  
վածքներ ունեցող տերեւները պետք է հավաքել առանձին

Անձը եվից անմիջապես հետո կամ գաշտերը ջրելաւ հետո և առհասարակ թաց տերեները չպետք է հավաքել (քաղել):

Բերքահավաքը չպետք է կատարել նաև որվա տարք  
ժամերին:

Տերեները պետք է քաղել առավոտյան ժամերին,  
ցողն անցնելուց հետո և յերեկոյան։ Ամբողջ որը կարելի  
յէ բերքը հավաքել միայն ամպ որերը։

Հաշվի առնելով առաջակոր կոլխոզների փոքր՝ հանձնաբարակում և ծխախոտի քաղը կատարել նաև գիշերները՝ մինչև առավոտյան ցողի յերեվալը:

Բերքահավաքի քաղերը կատարել շարքերում միաժամանակ յերկու կողմերից, այն եւ աջ և ձախ շարքերից:

Համբարձութեած տերեւների կոթերը պետք է դասավորել մեկը մյուսի վրա 15—20 տերն հաստությամբ, փորից հետո դասավորել մարգերում՝ բույների ստվերի տակ:

Հավաքած տերենները վոչ մի դեպքում չպետքէ թող-  
նել դաշտում արևի տակ, այլ պետք է փոխադրել չորանոց:  
Բերքը դաշտից չորանոց փոխադրելիս պետք է խնամքով  
վերաբերվել, վոր տերենները չփշանան: Կթոցների կամ  
այլի մեջ, նախքան տերենները դարսելը, պետք է փուլ  
վորեն այլ բույսեր: Չորանոցներում ծխախոտը գատար-  
կել փոխադրելուց հետո անմիջապես և տերենները խնամ-  
քով՝ ձեռքով հանել կոթունը-կոթունի հետ ու դարսել  
թեյին շարելու վայրը:

### 3. ԾԽԱԽՈՏԸ ԹԵԼԻՆ ՀԱՐԵԼԸ

Նախըան տերևները թելին շարելը պետք է ահասկա-  
վորել ըստ մեծության (խօշող, միջակ և մանր)) հասառ-

նացման աստիճանի և առանձնացնել վնասված ու հիվանդութ տերենները:

Յուրաքանչյուր տեսակը թելին պետք ե շարել առանձին, չողով և ավաղով աղբոտված տերենները նույնպես առանձնացնում են, և թելին շարվում առանձին:

Թելին պետք ե շարել քաղելուց անմիջապես հետո, մինչեւ տերենների թառամելը (տամկացումը), թուլլ չտալ քաղելուց մինչև շարելը մեկ որից ավելի տերի: Շարելու խտությունը պետք ե պահպանել այնպես, վոր չորանալու ժամանակ կամ շատ չօրանանա կամ արանքներին կանաչ տերեններ չմնան:

Թելին շարած՝ հողով կամ ավազով աղբոտված տերեններն անպայման պետք ե լվանալ:

Լվանալ հոսող ջրում, իսկ յեթե հոսող ջուր չկա, լվանալ վորեւ ամանի մեջ՝ ջուրը պարբերաբար փոխելով:

Լվացված շարանները չորացվում են չորանոցի շրջանակների վրա՝ նոսր կախված, ստվերու տեղում և ապա, տերմները չորանալուց հետո, չորացվում են արեգակի տակ կամ կրակե չորանոցում:

Առաջին և յերկրորդ քաղերը պետք ե շարել ավելի խիտ, քան մնացած քաղերը:

Ծխախոտի բերքահավաքի և շարելու աշխատանքների արտադրողականությունը խոշոր չափով կարելի ե բարձրացնել, կիրառելով ընկեր Գարեգին Բոստանջյանի աշխատանքի մեթոդները

Տես 1935 թ Դյուղերստի հրատարակած «Բոստանջյանը թելում և գրքում»:

#### 4. ՏԱՄԿԱՑՈՒՄԸ

Տամկացումը պետք ե կատարել թելին շարելուց հետո, տաք յեղանակներին՝ շրջանակների վրա, իսկ ցուրտ որերը՝ գետնի վրա, կոթերը վերև պահելով: Տամկացումը կույտերում, առանց թելին շարելու հանձնարարելի չեւ:

Չորանոցի շրջանակների վրա տամկացումը կատարելու դեպքում շրջանակները շարաններով 2—3 ժամով չուրանոցից դժերի վրա գուրու են բերում արեգակի տակ, ծիրախոտը տաքացնելու համար, վորից հետո շրջանակները նորից տեղափոխում են չորանոց, վորտեղ գասավօրում են իրար մոտ, իսկու գրությամբ և այգպես թողնում մինչև տամկացման վերջը:

Չոր և քամի յեղանակներին տամկացումը հաջող անցկացնելու համար անհրաժեշտ ե ծայրերի շրջանակները ծածկել վորեւ ծածկոցով, վորպեսզի խոնավության գուրշիացումը պահասի, վորով ավելի բարենպատ պայմաներ են ատեղծվում տամկացման համար:

Ծխախոտը տամկացնելուց առաջ գետնի վրա նախորով պետք ե փոել ծղոտ, խսիր կամ բրեգենտ, իսկ գուրսված շարանների հաստությունը 1—2 շարանից ավելի չպետք լինի:

Տամկացման ժամանակաշրջանը կախված ե ծխախոտի քաղից, հասունացման շրջանից և յեղանակների գրությունից:

Տամկացման ժամանակամիջոցը տեսում ե 1—3 որից վոչ ավելի:

Արագ և յեռանդուն տամկացման շրջանում ե՝ ջերմությունն ե բարձր լինում, և փշանալու գուանդ ե լինում,

ուստի շարանները պետք ե զգուշությամբ շուռ առալ, վոր ջերմաստիճանն իջնի:

Տամկացումը համարվում է ավարտված, յեթե տերեները դառնում են գեղնագույն, վորից հետո ծխախոտը պետք է չորացնել արևի տակ կամ կրակի չորացնում:

### 5. ՉՈՐԱՑՈՒՄԸ

Չորանոցի վայրը պետք է պաշտպանված լինի քամիներից, իսկ գծերի արանքների տարածույթունը մոլախոտերից զերծ պետք է լինեն, տամկացած շարանները հատուկ զգուշությամբ հարկավոր ե կախել չորանոցի շրջանակների վրա:

Երջանակների շարաններից գետին ընկած տերեները խնամքով պետք է հավաքել և չորացնել: Գիշերները՝ քամի և անձրևալին յեղանակներին ծխախոտը շրջանակներով չպետք է թողնել դրսում, բացովիա, այլ անպայման պետք ե տեղափոխել չորանոցի ներսը:

Չորանոցի շրջանակներից չորացած ծխախոտը պետք է հավաքել և հավանգի վերածել, միայն տերեները լրիվ չորանալուց հետո:

Երջանակներից ծխախոտի շարանները պետք է հավաքել առավատները, յերբ վորոշ խոնավություն ունեն, և հավանգ կապելիս չեն փշրվում:

Չորացած ծխախոտի վորակը պահպանելու նպատակով, չորանոցի առաստաղի հողմալին մասերում կախել «Դիպուար» և «Անաշամա» քաղերի հավանգները, իսկ մեջ տեղում՝ մնացած քաղերինը («Անաջ» «Տորուկ» և այլն):

Հավանգները կախել խնամքով և խիտ, վորպեսզի անբարենպաստ յեղանակներից չվնասվեն:

Այն շենքերը, վորտեղ չորացած ծխախոտ և պահպան, պետք ե լավ պաշտպանված լինեն քամիներից, մառախուղներից, անձրևներից և այլն:

Փշացումներից խուսափելու նպատակով՝ ծխախոտի չոր հավանգները պարբերաբար պետք ե ստուգվեն և խոնավ, թաց հավանգներ հայտաբերելիս առանձնացվեն ու չորացվեն արևի տակ կամ կրակե չորանոցում:

### IX. ՊԱՅՔԱՐ ԾԽԱԽՈՏԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ՎՆԱՍՍՈՒՆԵՐԻ ԴԵՄ

#### 1. ՍԱԾԻԼԱՆՈՑՆԵՐՈՒՄ

Սածիլների հիվանդությունը կանխելու համար անհրաժեշտ ե 10 որը մեկ անգամ բորդուան հեղուկ սրակել՝ առաջին անգամ կես տոկոսյա, իսկ հետագայում՝ մեկ տոկոսյա:

Սրակումները պետք է կատարվեն վաղ առավոտյան կամ յերեկոյան: Սրակումներից հետո սածիլանոցը չպետք ե շրել մինչև բորդուան հեղուկի չորանալը և տերենեներին կպչելը:

Բորդոյան հեղուկը պատրաստել նետեվյալ կերպ: ա) կետ տոկոսյա հեղուկ՝ մեկ դրու ջրին (12 լիտր) վերցնել 60 գրամ պղնձարջասպ և 60 գրամ չհանգցված լավորակ կիր: Պղնձարջասպը նախքան լուծելը պետք է փոշիացնել և լուծել փայտե կամ կափե ամանի մեջ: թիթեղե կամ մետաղե ամանի մեջ չպետք ե լուծել:

բ) մեկ տոկոսյա հեղուկ՝ մեկ դրու ջրում լուծել 120 գրամ պղնձարջասպ և նույն քանակությամբ լավորակ կիր:

գ) յերեք տոկոսյա հեղուղի՝ մեկ դույլ ջրում լուծել 360 գրամ պղնձարջասով և նույն քանակությամբ լավորակ կիր:

Սածիլանոցում հիվանդություններ յերեալու դեպքում հիվանդությունների ոջախները վոչնչացնելու նպատակով հիվանդացած տեղերը պղնձարջասովի 30/0-յա հեղուկ շաղ տալ: Այդ լուծույթն այնպես պետք է շաղ տալ վարակված տեղերը, վոր առողջ սածիլների վրա չթափիլի:

Սածիլանոցի վտանգավոր վնասատուներից մեկն իշանառանչն է (արջուկը):

Սածիլանոցում իշխառանչի դեմ պայքարը պետք է սկսել վաղ զարնան, մինչև ծխախոտի սերմերի ցանքը: Ցանքից առաջ պատրաստի ջերմոցների կամ մարգերի մեջ մանր գնդակիկների ձևով (մեծ սխառով չափով) թունավորված դրավչանյութ պետք է շաղ տալ և 1—2 սմ խորությամբ ծածկել: Հետագայում իշխառանչ յերեալու դեպքում կրկնել գրավչանյութերի նույն ձևով շաղ տալը:

Գրավչանյութերը պատրաստում են սպիտակ մինդեղից, կամ փարիզյան կանաչից, խառնելով մանրացրած յեղիպտացորենի, գարու, կամ քուսպի հետ:

Յեղիպտացորենից և գարուց գրավչանյութ պատրաստում են հետևյալ ձևով: յեղիպտացորենը կամ գարին ջրի մեջ այնքան են յեփում, մինչև փափկում է, վորից հետո ջուրը թափում են, հատիկները տրորում—իրար են խառնում և անմիջապես ափելացնում սպիտակ մինդեղ կամ փարիզյան կանաչ, հետևյալ հարաբերությամբ. 10 կիլոգրամ յեղիպտացորենին կամ գարուն (քանակը հաշվում են մինչև յեփելը՝ չոր վիճակում) մաս-մաս խառնում են 500 գրամ մինդեղ կամ 800—900 գրամ փարիզյան կա-

նաշ վորից հետո պատրաստում են մանր գնդակիկներ։ Քուսպից պատրաստում են հետևյալ կերպ. պահանջված չափով քուսպը ջրի մեջ յեփում են, փափկանալուց հետո ջուրը թափում, քուսպը արորում են ու ամբողջ մասսան լավ խառնում իրար և այդ ժամանակ մաս-մաս ավելացնում փարիզյան կանաչ կամ ֆտորական նատր, հետեւ վյալ հարաբերությամբ. 10 կիլոգրամ քուսպին վերցնում են մեկ կիլոգրամ փարիզյան կանաչ կամ ֆտորական նատր:

Մեկ կիլոգրամ գրավչանյութը բավականացնում է 150—200 գ. մետր սածիլանոց թունավորելու:

Գրավչանյութի համար գործադրվող թուները վտանգավոր են մարդու, անասունների ու թռչունների համար, ուստի նրանց հետ պետք է վերաբերվել չափազանց զգուշ և գրավչանյութերի ավելցուկները թաղել հողի մեջ:

## 2. Գ Ա Շ Ո Ւ Մ

Այն դաշտերը, վորտեղ իշխառանչ կամ ագրոտիսիթ թրթուր են նկատվել սածիլերուց 7—10 որ առաջ թռւնավոր գրավչանյութ պետք է շաղ տալ:

Մասայական ձևով կարագրինի թրթուր յերեվարու դեպքում պարտադիր կարգով պետք է կազմակերպել ձեռքով հավաքելու գործ:

Մխախոտի դաշտում ճրագախոտ յերեվարու դեպքում անմիջապես պետք է արմատներով հանել և այրել (չթողնել մինչև սերմերի համանելը):

Մխախոտի լիիճի դեմ պայքարելու նպատակով վարեկված դաշտերի ջրելը պետք է պակսեցնել և, բացի այդ, մեկ հեկտար տարածության համար պետք է վերցնել 15 կգ սապոն, լուծել 50 դույլ ջրի մեջ և սրակել:

Այն հողամասերը, վորտեղ ծխախոտը վարակված ե  
«Ծրիպով», 2—3 անգամ ինսեկտիցինի լուծույթ պետք է  
սրսկել:

Լուծույթը պատրաստում են հետեւյալ կերպ. 10 լիտր  
ջրում լուծում են 50 գրամ սապոն և 25 գրամ ֆինսեկ-  
տեցինա:

Մի հեկտարին մի անգամ սրսկելու համար 1500-ից  
2000 լիտր լուծույթ ե գործադրվում:

Սըսկումը կարելի յէ կատարել որվա բոլոր ժամերին:

Ծխախոտի տերենների բակտերիալ չեչոտության (ոյա-  
րուխայի) դեմ դաշտում հետեւյալ կերպ ե պայքար  
մղվում:

1. Բերքահավաքից հետո ցողունները պետք ե հավա-  
քել և տվյալ հողամասը խոր վարել, վորովնետե դաշ-  
տում մեծ թվով բակտերիալ չեչոտության (ոյարու-  
խայի) վարակի մնացորդներ են պահպանվում:

2. Ծխախոտի չորանոցներում յեղած աղբն ու տերենների  
մնացորդն անմիջապես պետք ե հավաքել մի տեղ և այրել,  
չպետք ե թույլ տալ կուտակվելու, վորովնետե քամու կամ  
վուրքի հետ վարակված բույսների փոշին տարածվելով հի-  
վանդություն տարածող բակտերիանները կարող են ընկնել  
դաշտերը:

3. Բույսերի աճման առաջին շրջանում անհրաժեշտ  
ե վարակված հիվանդ բույսերը հանել և այրել, իսկ ամեն-  
ի մեծ բույսերից պետք ե հիվանդ տերենները քաղել  
և հեռացնել դաշտից ու նույնակես վոչնչացնել:

Այնուհետեւ վարակված դաշտերը սրսկել բարդոյան  
հեղուկ՝ սրսկման տարածության մեջ ընդգրկելով նաև  
փորոշ չափով առողջ բույսերի տարածություն:

4. Խոնավ յեղանակին կամ անձրենների, ցողի ժամանակ  
ծխախոտի վարակված դաշտի խնամքի աշխատանքներ

(քաղճան, ծաղկատում, բջատում, տերենների քաղ և  
այլն) չպետք ե կատարել, վորոնետե հիվանդ բույսերի  
բակտերիանները հազուատի հետ հեշտ կերպով տարածվում  
են դաշտի զանազան կողմերը և մեկ դաշտից մյուսը:  
Դաշտի խնամքը պետք ե սկսել առաջին հերթին առողջ  
հողամասերից ու հետո անցնել վարակված հողամասերը:

### ԲԵԲՔԻ ՀԵՏԱԳԱ. ՎԵՐԱՄՇԱԿՈՒՄԸ

Ծխախոտը նախքան հակ կապելը պետք ե դասավորել  
բառ բուսաբանական տեսակի, քաղի, տերենների գույնի  
և մեծության:

Հիվանդու և մեխանիկական մնացորդները ունեցող  
տերենները պետք ե առանձացնել:

Ծխախոտը հակերի մեջ պետք ե դասավորել խնամքով,  
տերենների կոթունները գեպի գուրս, այնպես, վոր կոթուն-  
ները գարաված լինեն միմյանց վրա, և հակերը յերեան  
առանց բացելու:

Ծխախոտի փնջերը, «ստուբ» և շարանները հակերում  
պետք ե դասավորել յերկու շարք (իրար դիմաց): Էնդ-  
վերում մեկ շարքի տերենների ծայրերը պետք ե ծածկեն  
մյուս հակառակ շարքի տերենների ծայրերը վոչ պակաս  
մեկ յերրորդ և վոչ ավելի կես մասից:

Հակավորման ժամանակ ծխախոտի ուժեղ մամրում  
չի թույլատրվում:

Ցուրաքանչյուր հակ պետք ե պարունակի մեկ բոտանի-  
կական տեսակի, մեկ տեսակի մշակման (ջրովի կամ ան-  
ջրովի), մեկ տեսակի չորացման (կրակի կամ արեգակի), մեկ  
քաղի, մեկ ապրանքային տեսակի և միատեսակ գույնի  
ծխախոտ:

Ծխախոտի նախանական մշակության և այլ աշխա-  
տանքների նկատմամբ պետք ե խիստ առաջնորդվել գոյու-  
թյուն ունեցող ստանդարտով:

Պատ. Խմբ'։ Գր. Ազամալյան  
Արքադրիչ։ Գար Հոկերյան

Դշավ. Մատոր 1145, Հրատարակ. 4, ուսուվեր 83, ալիքաժ 1500.

Հանձնված ե արտադրության 25 հունվարի 1937 թ.

Սառըադրված ե ապագրելու 11 գետրվարի 1937 թ.

Կառավարության, Յերևան, Նալբանդյան 11



44092

МРЧС № 20

ОСНОВНЫЕ АГРОТЕХНИЧЕСКИЕ  
УКАЗАНИЯ  
ПО ОБРАБОТКЕ ТАБАКА

Сельхозгиз 1937 Ереван

«Ազգային գրադարան



NL0282433

75

18366

ЧИСЛО 40 Ч.

ОСНОВНЫЕ АГРОТЕХНИЧЕСКИЕ  
УКАЗАНИЯ  
ПО ОБРАБОТКЕ ТАБАНА

Сельхозгиз

1937

Бровки